

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՆԱԳՐԱՎՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար)

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հ. Կ.

Անկախ պետականության բացակայության պայմաններում Հայ առաքելական եկեղեցին փոխարինել է պետությանը՝ կրելով հայության ճակատագրի պատասխանատվությունը: Հարյուրամյակների ընթացքում հայ և օտարազգի աշխարհիկ առաջնորդներից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ստացել է շարժական և անշարժ գույք, ձեռք բերել բազում կալվածքներ: Եկեղեցին իր եկամուտներն օգտագործում էր ինչպես սեփական կարիքների, այնպես էլ կրթամշակութային նպատակներով:

Օտար տիրապետության պայմաններում մեծ մասամբ հայկական եկեղեցիներին կից գործող ծխական դպրոցներում էին գրագիտություն ստանում հայ մանուկները: Այս տեսակետից օրինաչափ է, որ հայ հասարակությունը բուռն հակառակություն հանդես բերեց 1903 թ. հունիսի 12-ին ռուսական կայսր Նիկոլայ II-ի ստորագրած օրենքի առթիվ, որով նախատեսվում էր պետականացնել հայ եկեղեցուն պատկանող կալվածքներն ու գույքը: Հայությունը քաջ զիտակցում էր, որ այս քայլով առաջին հերթին հարված էր հասցվում հայկական դպրոցին, քանի որ փակման վտանգի մեջ էին հայտնվելու եկեղեցու եկամուտների հաշվին պահվող ծխական և թեմական դպրոցները: Ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության պայմաններում հայության չդադարող դժգոհությունները Նիկոլայ II-ին ստիպեցին 1905 թ. օգոստոսի 1-ին հրամանագիր հրապարակել՝ բռնագրավված գույքը հայ եկեղեցուն վերադարձնելու մասին՝:

Հայաստանի Առաջին հանրապետության կարճատև գոյության շրջանում (1918-1920 թթ.), անկախ պետականության պայմաններում, տեղի ունեցավ Հայոց պետություն – Հայոց եկեղեցի մերձեցումը: Այս տեսակետից ուշագրավ է այն իրողությունը, որ ՀՀ ղեկավար գործիչների մեջ զգալի թիվ էին կազմում Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի նախկին սաներն ու ուսուցիչները:

Ավելի քան երկուսուկես տարվա փոթորկալից շրջանից հետո Հայաստանի Առաջին հանրապետությունը դադարեցրեց իր գոյությունը: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում, մի կողմից, իշխանությունից հրաժարվող ՀՀ կառավարության ներկայացուցիչներ Դրաստամատ Կանայանի և Համբարձում Տերտերյանի, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի միջև ստորագրված համաձայնագրով Հայաստանը հռչակվեց «անկախ Սոցիալիստական Հանրապե-

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. VI (Հայաստանը 1870-1917 թթ.), Ե., 1981, էջ 350-356, 374-378:

տույություն»²: Մինչ այդ՝ նոյեմբերի 29-ին, խորհրդային 11-րդ Կարմիր բանակի գորամասերի ուղեկցությամբ Հայաստանի հյուսիսարևելյան սահմաններից Քարվանսարա էր մտել հայտնի բոլշևիկ Մարգիս Կասյանի գլխավորությամբ Խորհրդային Ադրբեջանում ստեղծված Հայաստանի հեղափոխական կոմիտեն և երկիրը հայտարարել խորհրդային հանրապետություն: Փաստորեն՝ արտաքին միջամտության և նախկին կառավարության հրաժարականի հետևանքով Հայաստանում հաստատվեց խորհրդային վարչակարգ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո երկրի նոր իշխանություններն իրենց ձեռնարկումների մեջ առաջնորդվում էին պետական բոլոր ոլորտներում միակուսակցական համակարգ հաստատելու բոլշևիկյան գործելաոճով, որը մինչ այդ հաջողությամբ փորձարկվել էր Խորհրդային Ռուսաստանում: Միանգամայն այլ իրավիճակ ստեղծվեց նաև պետություն – եկեղեցի հարաբերություններում: Բոլշևիկների հակակրոնական գաղափարախոսության մեջ եկեղեցին ընկալվում էր միմիայն իբրև «հին կարգերի մնացուկ», «ժողովրդական զանգվածների գիտակցությունը թունավորելու միջոց» և խոչընդոտ՝ բնակչության շրջանում կոմունիստական գաղափարների արմատավորման համար: Այս պայմաններում ավելորդ է խոսել մատաղ սերնդի դաստիարակության գործում եկեղեցու ունենալիք դերի մասին: 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Խորհրդային Ռուսաստանում ռուս ուղղափառ եկեղեցուն պատկանող հարստությունների, շարժական և անշարժ գույքի բնագրավման գործընթաց սկսվեց: Այն հատկապես մեծ ծավալներ ընդունեց 1920-ական թթ. սկզբին³:

Խորհրդային Ռուսաստանի օրինակով՝ Հայաստանի նորաստեղծ խորհրդային կառավարությունը ևս նպատակային քայլեր ձեռնարկեց Հայ առաքելական եկեղեցու ունեցվածքը բնագրավելու ուղղությամբ: Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՄԽՀ) պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմինը՝ Հայաստանի հեղափոխական կոմիտեն, 1920 թ. դեկտեմբերի 17-ին դեկրետ հրատարակեց Հանրապետության տարածքում գործող բոլոր ազգությունների հոգևոր հիմնարկությունների մշակութային և կրթական հաստատությունները պետականացնելու և լուսավորության ժողովրդական կոմիսարիատին հանձնելու մասին⁴: ՀՄԽՀ լուսժողովում Աշոտ Հովհաննիսյանի դեկտեմբերի 17-ի հրամանի համաձայն՝ այդ հաստատությունները հանձնվեցին տեղա-

² Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազախեցյանի, Ե., 2000, էջ 383-384:

³ Русская Православная церковь в советское время (1917-1991). Материалы и документы по истории отношений между государством и церковью, составитель Г. Штриккер, М., 1995, с. 46-94; Поляков А. Г. Некоторые аспекты экономической адаптации православного духовенства к новым материальным условиям сосуществования с Советской властью в 1918-1921 гг. (Проблемы современной экономики, 2006, N 3-4).

⁴ ՀՄԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1 (1920 թ. նոյեմբերի 29 – 1921 թ. փետրվարի 18), Էջմիածին, 1921, էջ 16:

կան հեղկումների լուսավորության բաժիններին: Որպես բացառություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճեմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանը և տպարանն անմիջականորեն ենթարկվելու էին լուսժողովմաստին՝ վերակազմվելով վերջինիս կողմից նշանակվող կոմիսարի ղեկավարությամբ⁵: Լուսժողովի ղեկտեմբերի 20-ի հրամանով Էջմիածնի վանական կրթամշակութային բոլոր նախկին հաստատությունների կոմիսար նշանակվեց երիտասարդ մտավորական՝ պատմաբան, լեզվաբան, արվեստագետ, սոցիալիստ-հեղափոխական (Էսեռ) Լևոն Լիսիցյանը⁶: Վերջինս նշանավոր ազգագրագետ Ստեփան Լիսիցյանի որդին էր: Կոմիսարին իրավունք էր վերապահվում նաև բռնագրավել համապետական նշանակություն ունեցող «բոլոր հնություններն ու գեղարվեստական գործերը»:

Լևոն Լիսիցյանն անմիջապես ժամանեց Էջմիածին և ղեկտեմբերի 21-ից անցավ իր պարտականությունների կատարմանը, այն է՝ Մայր Աթոռին պատկանող կրթամշակութային հաստատությունների, շինությունների (ճեմարանը՝ հարակից շենքերով, տպարանը, մատենադարանը, թանգարանը, Վեհարանի նոր շենքը, էլեկտրակայանը, Զվարթնոցը և այլն), զանազան իրերի բռնագրավմանը: Նա անմիջապես Մայր Աթոռի վանական խորհրդից, Մինոդից, Դիվանից, շուրջ երկու տասնյակ հոգևորականներից պահանջեց իրեն հանձնել Հայաստանի հեղկումի ղեկրետի և Լուսավորության ժողովմաստի հրամանների հիման վրա պետականացվող հիմնարկներն ու նրանց պատկանող գույքը⁷: Դեկտեմբերի 23-ին լուսժողով Ա. Հովհաննիսյանին ուղղված զեկուցագրում մանրամասն տեղեկացնելով վանքապատկան գույքի, ունեցվածքի պետականացման ուղղությամբ կատարված առաջին քայլերի մասին՝ Լ. Լիսիցյանը նշում էր, որ կարևոր է համարում պետականացված մատենադարանն ու թանգարանը «մշտական ու կարող աշխատակիցների կազմով» ապահովելը: Նա առաջարկում էր նաև Էջմիածին ուղարկել ճարտարապետ Թորոս Թորամանյանին՝ շրջանի ճարտարապետական հուշարձանների պահպանության պատասխանատու աշխատանքը ղեկավարելու համար⁸:

Լ. Լիսիցյանի կարգադրությամբ՝ մատենադարանի կարիքների համար Մայր Աթոռից և նրա միաբաններից առգրավվեց մեծաքանակ գույք (Մինոդի մեծ և միջակ սեղանները, գրքերի պահարան, թանաքամաններ, կարկին, գրասեղան, դահլիճի սեղանը, երկու մեծ գորգեր, մեծ համրիչ, երեք երկաթե վառարան, տախտակներ՝ մատե-

⁵ Նույն տեղում: Տե՛ս նաև Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 428, ց. 1, գ. 137, թ. 1:

⁶ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 4 և շրջ.: Լ. Լիսիցյանի կենսագրության և գործունեության մասին տե՛ս **Տեր-Հակոբյան Ս.**, Լևոն Լիսիցյան (Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, 1921-1922, գիրք Ա և Բ, Էջմիածին, 1922, էջ 317-319), **Հակոբյան Ս.**, Հայ մտավորականի ուղին (Լենինյան ուղիով, 1964, N 1, էջ 96-101), **Ղարիբջանյան Գ. Բ., Վարդանյան Լ. Ս.**, Լևոն Լիսիցյան (1892-1921) (Լրաբեր հասարակական գիտությունների, 1993, N 1, էջ 53-58):

⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1172, թ. 1, ֆ. 428, ց. 1, գ. 137, թ. 3-8, Մաշտոցի անվան Մատենադարան, Լևոն Լիսիցյանի ֆոնդ, թղթ. 261, վավ. 3, 4:

⁸ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 2-3:

նադարանի դարակները պատրաստելու համար, լվացարաններ, դույլեր, ինքնաեռներ, լուսանկարչական ապարատ, ապակիներ, թուղթ և այլն⁹: Սակայն ՀՄԽՀ լուսժողովատը նախատեսում էր հետագայում Լ. Լիսիցյանի ուժերն օգտագործել այլ բնագավառում. դեկտեմբերի 17-ին հրաման էր արձակել Երևանի համալսարանը վերակազմավորելու և Երևանի ժողովրդական համալսարանի վերանվանելու մասին: Գերմանիայում ուսանած Լ. Լիսիցյանի գիտելիքներն ու փորձառությունը լավագույնս կիրացվեին գիտական և կրթական ասպարեզներում:

Լուսավորության ժողովուհի հանձնարարությամբ դեկտեմբերի 28-ին Էջմիածին գործուղվեց գրական-հասարակական գործիչ, մանկավարժ, սոցիալ-դեմոկրատ Լևոն Սարգսյանը: Լ. Լիսիցյանին ուղղված անձնական նամակում (28.XII.1920) Ա. Հովհաննիսյանը տեղեկացնում էր, որ Լ. Սարգսյանին հանձնարարված է ծանոթանալ Էջմիածնի պետականացված հիմնարկների աշխատանքներին, իսկ այնուհետև շարունակում. «Ես ենթադրում եմ, որ Էջմիածնում Ձեր գործունեությունը ժամանակավոր բնույթ է կրելու: Տևական աշխատանքի համար ես ի նկատի ունեմ Ձեր տեղ Լ. Սարգսյանի թեկնածությունը: Ձեր աշխատակցությունը կարևոր եմ համարում ուրիշ ասպարեզներում՝ ավելի գիտական, մասնագիտական հարցերում»: Լուսժողովուրդը հայտնում էր, որ նա ներառված է Երևանի ժողովրդական համալսարանի դասախոսների ցանկում, պետք է ընդգրկվի նաև վերակազմավորվելիք Հնությունների պահպանության կոմիտեի մեջ: Ա. Հովհաննիսյանը հրահանգում է մանրամասն զեկուցում ներկայացնել կատարված աշխատանքների մասին¹⁰:

Ժամանելով Երևան՝ 1921 թ. հունվարի 1-ին Լ. Սարգսյանն ու Լ. Լիսիցյանը ՀՄԽՀ լուսժողովուրդ Ա. Հովհաննիսյանին համատեղ զեկուցագիր ներկայացրին նախկին վանքապատկան հաստատությունների ճակատագրի վերաբերյալ: Չեկուցագրում նշվում էր, որ պետականացվել են կամ առաջիկայում պիտի պետականացվեն վանքապատկան հետևյալ հաստատությունները. Ճեմարանը՝ հարակից բոլոր շինություններով (ննջարան, հիվանդանոց, սեղանատուն, խոհանոց, Քանանյանի շենքը և այլն), կոնսերվատորիայի անավարտ շենքը, տպարանը, էլեկտրակայանը, բաղնիքը, դեղատունը, մատենադարանը, թանգարանը, նոր Վեհարանը, միաբանության նոր շենքից առնվազն 6 բնակարան, Չվարթնոցն ու Հռիփսիմեի վանքը՝ իրենց շինություններով ու այգիներով: Կարևոր էր համարվում այս հաստատություններն ու շինություններն օգտագործել միմիայն կրթամշակութային նպատակներով: Ըստ այդմ էլ՝ նրանք եզրակացնում էին. «Էջմիածնի բոլոր վերոհիշյալ հաստատություններն ու գոյություն ունեցող գիտական նյութերը հնարավոր և անհրաժեշտ են դարձնում հիմնել այդտեղ հնագիտական-պատմական ինստիտուտ, որը, օգտագործելով եղած հարուստ նյութերը, միաժամանակ նպաս-

⁹ Նույն տեղում, ֆ. 428, ց. 1, գ. 142, թ. 6:

¹⁰ Էվոյան Վ., Փաստաթղթեր Լևոն Լիսիցյանի մասին (Բանբեր Հայաստանի արխիվների, 1973, N 1, էջ 191):

տեր նրանց կարգավորմանն ու լրացմանը»¹¹: Էջմիածնի մատենադարանի ձեռագրական և արխիվային-պատմական նյութերը մշակելու, ուսումնասիրելու և հրատարակելու նպատակով գիտական ինստիտուտ հիմնելու գաղափարի հեղինակը Լևոն Սարգսյանն էր, իսկ այն կյանքի էր կոչվել Լևոն Լիսիցյանի և Սենեքերիմ Տեր-Հակոբյանի հետ քննարկումների շնորհիվ¹²:

Լ. Սարգսյանի և Լ. Լիսիցյանի առաջարկն անմիջապես հավանության արժանացավ լուսժողովում Ա. Հովհաննիսյանի կողմից: Նրա հրահանգով Էջմիածնի նախկին կուլտուր-կրթական հիմնարկությունների կոմիսարությունը վերակառուցվեց Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի, որի վարիչ նշանակվեց Լ. Սարգսյանը: Հունվարի սկզբին վերջինս մեկնեց Ալեքսանդրապոլ՝ հիմնարկության գիտական, լուսավորական նպատակների համար անհրաժեշտ իրեր, գույք ձեռք բերելու և Էջմիածին փոխադրելու նպատակով¹³: Նրա բացակայության ընթացքում (մեկնել էր Ալեքսանդրապոլ) ինստիտուտի վարիչի պարտականությունները կատարում էր Լ. Լիսիցյանը, որն իր մի զեկուցագրում նշում է, որ սպասում է Լ. Սարգսյանի վերադարձին, «որպեսզի վերջնական ձևակերպություն և կազմություն ստանա ծրագրված ինստիտուտը»¹⁴:

Պետք է փաստել, որ Մայր Աթոռին պատկանող կրթամշակութային հաստատությունների պետականացումը Հայաստանի խորհրդային դեկավարության հակակրոնական և հակաեկեղեցական գործողությունների առաջին քայլն էր միայն: Լուսժողովի 1920 թ. դեկտեմբերի 31-ի երկու հրամաններով պետական, հասարակական և մասնավոր դպրոցներում արգելվեց կրոնական առարկաների դասավանդումը, իսկ հոգևորականներին՝ պաշտոնավարել դպրոցներում և այլ կրթամշակութային հաստատություններում: Միայն կարգաթող լինելու դեպքում նախկին հոգևորականները կարող էին ստանձնել տվյալ պաշտոնները (այն էլ՝ լուսժողովմատի հատուկ թույլտվության պարագայում): Արգելքը խախտողներին սպառնում էր «հեղափոխական տրիբունալի» դատը¹⁵: Իսկ 1921 թ. հունվարի 26-ին Հայաստանի հեղկոմի նախագահ Սարգիս Գասյանը լուսժողովում Աշոտ Հովհաննիսյանին լիազորեց բռնագրավել, հաշվառել և Էջմիածնի պետական թանգարան տեղափոխել ծիսական նպատակներով չօգտագործվող՝ Մայր Աթոռին պատկանող թանկարժեք իրերը (ոսկի, արծաթ, թանկարժեք քարեր, գեղարվեստական, տնայնագործական առարկաներ և այլն)¹⁶: Փետրվարի 1-ին ժամանելով Էջմիածին՝ Ա. Հովհաննիսյանը ձեռնամուխ եղավ «վանքի և վանականների տրամադրության տակ գտնված ժողովրդական սեփականություն կազմող թանկարժեք իրերենները» ցուցակագրելու և Էջմիածնի պետա-

¹¹ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 9 և շրջ., 12, ֆ. 428, ց. 1, գ. 142, թ. 1-2:

¹² Նույն տեղում, ֆ. 428, ց. 1, գ. 142, թ. 6 շրջ.:

¹³ Նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 7:

¹⁴ Նույն տեղում, ֆ. 428, ց. 1, գ. 142, թ. 7 շրջ.:

¹⁵ ՀՄԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 43-44:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2252, թ. 1:

կան թանգարան փոխադրելու գործին¹⁷: Պետության կողմից եկեղեցապատկան գույքերի, թանկարժեք իրերի բռնագրավումը հարուցեց Մայր Աթոռի միաբանների և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի անթաքույց դժգոհությունը խորհրդային իշխանության և նրա պաշտոնյաների նկատմամբ:

1921 թ. փետրվարի 2-ին լուսժողովում Ա. Հովհաննիսյանի նախագահությամբ տեղի ունեցավ Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի առաջին կազմակերպչական նիստը: Ինստիտուտի գիտական կոլեգիայի նախագահ նշանակվեց կոմիսար և ժամանակավոր վարիչ Լևոն Սարգսյանը, գիտական քարտուղար՝ Երվանդ Տեր-Մինասյանը, անդամներ՝ մատենադարանի վարիչ Սենեքերիմ Տեր-Հակոբյանը և թանգարանի վարիչ Լևոն Լիսիցյանը¹⁸: Փետրվարի 2-ից Լ. Սարգսյանն անցավ իր պարտականությունների կատարմանը: Արդեն փետրվարի 5-ին Հայաստանի հեղկոմը դեկրետ հրատարակեց «Էջմիածնի գույքերի մի մասը Լուսժողովուհատին հանձնելու մասին»: Ըստ այդմ՝ պետականացվում և լուսժողովուհատի անմիջական հսկողության տակ էին դրվում Հոփսիսի վանքը, Զվարթնոցի ավերակները՝ հարակից շինություններով ու գույքերով, Վեհարանի նոր շենքը, վանական հյուրանոցը, նոր հանրակացարանը: Ժողովուհատին հանձնարարվում էր վերակազմել Էջմիածնի կրթամշակութային հաստատությունների պետականացված ցանցը (մատենադարան, թանգարան, տպարան և այլն) և Էջմիածնում հիմնել կուլտուր-պատմական ինստիտուտ¹⁹: Նշյալ դեկրետով իրավական հիմքի վրա դրվեց շուրջ մեկ ամիս փաստացի գործող՝ Հայաստանի գիտական առաջին հիմնարկությունը՝ Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը:

Նորաստեղծ ինստիտուտի աշխատանքներն ընդհատվեցին 1921 թ. փետրվարյան հակախորհրդային ապստամբության պատճառով. փետրվարի 17-ին դաշնակցական ջոկատները գրավեցին Էջմիածինը: Մի շարք դեկավար կոմունիստ գործիչների հետ ձերբակալվեց, բանտարկվեց, իսկ փետրվարի 18-ի, լույս 19-ի գիշերը գնդակահարվեց Լևոն Լիսիցյանը: Լևոն Սարգսյանը տեղափոխվեց Երևան: Փետրվարի 18-ին մայրաքաղաք Երևանը գրավելուց հետո ապստամբները կյանքի կոչեցին Հայաստանի Հանրապետության վերջին՝ Միմոն Վրացյանի դեկավարած կառավարությունը՝ Հայրենիքի փրկության կոմիտե անվանումով:

Գևորգ Ե կաթողիկոսը հույս ուներ, որ նոր իշխանությունները Մայր Աթոռին կվերադարձնեն բոլշևիկյան վարչակարգի կողմից բռնագրավված եկեղեցապատկան հաստատությունները: Բանն այն է, որ Հայաստանի փրկության կոմիտեի նախագահ Միմոն Վրացյանը փետրվարի 26-ին Երևանի թեմի առաջնորդ Խորեն արքեպիսկոպոս Սուրադբեկյանին խոստացել էր բռնագրավված հաստատությունները վերադարձնել Մայր Աթոռին: Կաթողիկոսի խնդրանքով Խորեն արքեպիսկոպոսն ու դիվանապետ Կորյուն եպիսկոպոսը մար-

¹⁷ Նույն տեղում, թ. 2 և շրջ.:

¹⁸ Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, էջ 321:

¹⁹ ՀՄՄՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1, էջ 108:

տի 21-ին նշյալ հարցով հանդիպում ունեցան Ս. Վրացյանի հետ: Սակայն այս հանդիպումը ցանկալի արդյունք չտվեց: Չնայած Մայր Աթոռի դիմումներին՝ Հայրենիքի փրկության կոմիտեի ղեկավարությունը չկատարեց իր խոստումը²⁰:

1921 թ. ապրիլի 2-ին խորհրդային ուժերը վերագրավեցին Երևանը: Հակախորհրդային ապստամբության պարտությանը հաջորդող շրջանում Խորհրդային Հայաստանի իշխանություններն առժամանակ մեղմացրին եկեղեցու հանդեպ կիրառվող քաղաքականությունը: Ընդառաջելով Մայր Աթոռի դիմումներին՝ ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1921 թ. սեպտեմբերի 20-ին որոշեց եկեղեցուն վերադարձնել թանգարանը, Հոփսիսիմեի, Գայանեի վանքերը և վանքապատկան այգիների մի մասը: Միայն տասնամյակներ անց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հետ ստացավ խորհրդային վարչակարգի կողմից բռնագրավված շինությունները:

**ЭКСПРОПРИАЦИЯ ЦЕРКОВНОЙ
СОБСТВЕННОСТИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ
(декабрь 1920 г. – февраль 1921 г.)**

СУКИАСЯН А. К.

Резюме

В антирелигиозной идеологии большевиков церковь рассматривалась в качестве препятствия на пути укоренения коммунистических идей в обществе. После советизации Армении Ревком Армении, по примеру России, предпринял практические шаги по экспроприации имущества Армянской Апостольской церкви. В декабре 1920 г. – феврале 1921 г. церковные культурно-образовательные учреждения (семинария с соседними зданиями, типография, библиотека, музей, новая резиденция католикаса и т. д.) и имущество Святого престола были объявлены государственной собственностью. Лишь десятилетия спустя Св. Эчмиадзину были возвращены принадлежавшие церкви здания.

²⁰ **Սուքիասյան Ա.**, *Խորեն արք.* Մուրադբեկյանի երկու զեկուցագրերը Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին (Էջմիածին, 2010, նոյեմբեր, էջ 113-115):

**EXPROPRIATION OF REQUISITION OF CHURCH IN SOVIET ARMENIA
(December 1920-February 1921)**

H. SUKIASYAN

Abstract

According to the Bolshevik anti-religious ideology, Church was considered to be an obstacle when disseminating communism with the population. After the Sovietization of Armenia, the Armenian Revolutionary Committee, following Russia's lead, undertook practical measures to confiscate the property of the Armenian Apostolic Church. Between December and February 1921, the cultural-educational institutions, buildings (seminary with adjacent buildings, the printing house, the repository, the museum, the new residence of the Catholicos, the power station, Zvartnots, etc.), household and other items of value in the Holy See were nationalized. It was only after decades that Mother See of Holy Etchmiadzin got back its buildings occupied by the Soviet regime.